

Ժողովուրդ

132
(2612)

17 սեպտեմբերի շաբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

Է. Երեւան, Արմավյան 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱՔԵԼ Է ՄԱՍ 93




50	Albania	66.6	+1.4	▲
51	Peru	66.5	-1.2	▼
52	France	65.9	+0.2	▲
53	North Macedonia	65.7	-2.9	▼
54	Saint Vincent and the Grenadines	65.7	-0.6	▼
55	Costa Rica	65.4	+1.2	▲
56	Panama	65.4	-0.8	▼
57	Italy	65.4	+0.5	▲
58	Armenia	65.3	-6.6	▼
59	Serbia	65.2	-2.0	▼
60	Colombia	65.1	-3.0	▼
61	Botswana	64.8	-2.8	▼
77	Greece	61.5	+0.6	▲
78	Moldova	61.3	-1.2	▼
79	Seychelles	61.1	-5.2	▼
80	Philippines	61.1	-3.0	▼
81	Benin	61.0	+1.4	▲
82	Micronesia	61.0	+10.6	▲
83	Tonga	60.8	+3.3	▲
84	Vietnam	60.6	-1.1	▼
85	São Tomé and Príncipe	60.3	+4.4	▲
86	Kosovo	60.1	-6.4	▼
87	Jordan	60.1	-4.5	▼
88	Senegal	60.0	+2.0	▲

«Ի հեճուկս գլոբալ դժվարությունների՝ Հայաստանն ունի շատ հստակ որոշակի տնտեսական հաջողություններ, եւ նաեւ այս համատեքստում, իհարկե ոչ անմիջականորեն, բայց շատ կարելի է համարում մի քանի օր առաջ հրապարակված՝ տնտեսության ազատության ինդեքսը, որտեղ Հայաստանի Հանրապետությունը զբաղեցնում է 11-րդ տեղը աշխարհի 165 երկրների շարքում: Այս սադրանքը նպատակ ունի կոտրելու Հայաստանի տնտեսական դինամիկան»:

Սա վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ սեպտեմբերի 13-ին խորհրդարանում ունեցած ելույթից հատված է: Մեր երկրի առաջնորդը, չգիտես ինչ տվյալների վրա հիմնվելով, համոզված է, որ ՀՀ-ն միջազգային տնտեսական վարկանշային աղյուսակում թռիչքածու աճ է ունեցել: Բայց ինչ է իրականում պարզվում. Փաշինյանի կողմից նշված՝ «տնտեսության ազատության ինդեքսի» տվյալների համաձայն՝ 11-րդ տեղում ոչ թե Հայաստանը, այլ Շվեդիան է: Վերոնշյալ ցուցակում Հայաստանը 58-րդ տեղում է: Փաստորեն, հերթական մանիպուլացիոն հայտարարությամբ ու փաստերի ակնհայտ խեղաթյուրմամբ՝ Փաշինյանը խաբել է:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ երկրում պատերազմական իրավիճակով պայմանավորված՝ իրավապահ համակարգը կանգնեցրել է քրեական վարույթներով սպասվող որոշակի գործողություններ: Օրինակ, օրերս տեղի ունեցած աղմկահարույց քրեական վարույթներից մեկով նախաքննական մարմիններից մեկը պետք է գործողություն իրականացնել, սակայն, պատերազմով պայմանավորված, գործընթացը ժամանակավորապես դադարեցվել է, իսկ թե կոնկրետ ո՞ր աղմկահարույց գործով, նախաքննությանը չվստատելու համար այս պահին քրեական վարույթը չենք նշում: Այսինքն, ստացվում է՝ վերջին օրերին իրավապահ համակարգը չի զբաղվում ներկայումս առկա քրեական գործերով, եւ սա այն դեպքում, երբ հենց երեկ՝ ՀՀ կառավարության նիստի ժամանակ, վարչապետ Նիկոլ Փաշինյանը խոսում էր պետության բնականոն գործունեության կարևորության մասին: «Մենք որեւէ պարագայում չպետք է մոռանանք պետության բնականոն գործունեության եւ գործառնությանը դեր կատարելու անհրաժեշտությունը: Խոսքը վերաբերում է նաեւ տնտեսությանը, եւ սա չափազանց կարևոր է: Իհարկե, մենք պետք է ամեն ինչով աջակցենք Զինված ուժերին»,- նշել էր նա: Ստացվում է՝ Փաշինյանը մի կողմից խոսում է պետության բնականոն գործունեությունն ապահովելու մասին, բայց մյուս կողմից իրավապահ համակարգում կյանքը կանգ է առել:



Մինչ Հայաստանը գտնվում է պատերազմական իրավիճակում, ՀՀ Ազգային ժողովում որոշել են շարունակել 44-օրյա պատերազմի հանգամանքների ուսումնասիրությունը: Մասնավորապես, «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերով մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանն է հանդես եկել համապատասխան նախաձեռնությանը եւ առաջարկում է Ազգային ժողովի «2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով» ստեղծված Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովի գործունեության ժամկետը երկարաձգել: Նկատելիք՝ ստեղծման օրվանից մինչեւ այժմ այս հանձնաժողովն արժեքավոր որեւէ աշխատանք չի կատարել եւ միայն ձեւականորեն նախկին 1-2 պաշտոնյայի է հրավիրվել խորհրդարան: Ընդգծենք, որ անգամ 2016 թվականի ապրիլյան պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովը որեւէ բացահայտմամբ աչքի չէր ընկել, այնինչ՝ նույն Անդրանիկ Քոչարյանն աղաղակում էր, թե բազմաթիվ փաստեր կան՝ նախկին իշխանությունների դեմ: Հիմա էլ, չկարողանալով սեփական իշխանությունների սխալները քողարկել, Քոչարյանն անընդհատ երկարաձգում է հանձնաժողովի աշխատանքները. մինչդեռ Հայաստանը կրկին պատերազմի մեջ է:



Սեպտեմբերի 13-ին հակառակորդի կողմից սկսված լայնածավալ պատերազմական գործողություններից հետո Սյունիքի, Վայոց ձորի եւ Գեղարքունիքի սահմանամերձ համայնքների բնակիչները կամ մազապուրծ էին եղել արկերի պայթյուններից կամ տարհանվել էին՝ իրավիճակով պայմանավորված: Տարհանումից հետո նրանց բնակարանների մոտ վերահսկողություն էր իրականացնում ոստիկանությունը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ սակայն, որ որոշ բնակիչների բնակարաններում գողություն է կատարվել: Խոսքը հատկապես վերաբերում է Գեղարքունիքի մարզի Սոթք համայնքի բնակիչների բնակարաններին: Ստացվում է՝ ոստիկանության վերահսկողությունը արդյունք չի տվել, կամ էլ, առհասարակ վերահսկողություն չի եղել: Իսկ թե ով կամ ովքեր են բնակարաններում գողություններ կատարողները, հուսանք՝ գոնե կկարողանան պարզել իրավապահները, եւ նրանց պատիժը չի ուշանա: Անգամ այս դժվարին իրավիճակներում անտուն մնացած քաղաքացիների բնակարանները թալանում են, եւ պատկան մարմինները ոչինչ չեն կարողանում անել:



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵՆ ՓԱՐԱՏՎԵԼ

Արցախի Ազգային ժողովի «Ժողովրդավարական կուսակցություն» խմբակցության ղապադմավոր Գավիթ Մեյքույանն ասում է, որ օրեր շարունակ Ստեփանակերտի Վերածննդի հրադարակում մեկնարկած հանրահավաքը ինքնաբերական է, դրա հետևում ֆաղափարական որևէ ուժ կանգնած չէ: ArmLur.am-ի հետ զրույցում նա նշեց, որ արցախցիներին մտահոգել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի Հայաստանի Ազգային ժողովում արած այն հայտարարությունը, թե ղապադմավորում է ցավոս ինչ-որ փաստաթուղթ ստորագրել:



-Մի քանի օր է ինչ հանրահավաքներ են Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում: Հավաքվածների հիմնական պահանջը ո՞րն է:

-Այո, հանրահավաքները շարունակվում են, եւ հիմնական պահանջը, ինչպես կար, մնում է եւ մնալու է այն, որ Արցախը չի կարող լինել Ադրբեյջանի կազմում: Այս ամենը լոկ խոսքեր չեն, եւ Արցախի քաղաքացիները ու զինվորները, որպեսզի պաշտպանեն իր իրավունքները: Քաղաքացիները ոչ թե ներքին ինչ որ խնդիրներ լուծելու, այլ ամբողջ աշխարհին ցույց տալու համար են փողոց դուրս եկել: Այստեղ ապրում են մարդիկ, ու որեւէ մեկն իրավունք չունի ու չպետք է ոտնահարի նրանց իրավունքները:

-Նիկոլ Փաշինյանի վերջին հայտարարությունն է անհանգստացրել արցախցիներին, երբ ասում էր, որ ինչ-որ փաստաթուղթ կարող է ստորագրել, ինչն էլ իր հերթին կարող է ենթադրել Ադրբեյջանի կողմից առաջ քաշված հինգ կետերի իրագործում, այդ թվում նաեւ՝ Արցախի՝ Ադրբեյջանի տարածքային ամբողջականության մաս դիտարկելը կամ ճանաչելը:

-Այո, դա նույնպես պատճառներից է, սակայն մինչեւ այդ էլ տարբեր խոսակցություններ կային՝ ներքաղաքականից մինչեւ միջազգային հարթակներում հնչող: Էլ չասած, որ Ադրբեյջանցիներն էլ մյուս կողմից են անդադար խոսում այդ

մասին: Այդ ամենը հասնում էր Արցախ ու արցախցիներին, իսկ վերջիններս, առաջին հերթին՝ մեզանից էին պահանջում ասել, թե ինչ է կատարվում, ինչպիսի գործընթացներ են ընթանում: Մենք՝ որպես ժողովրդի կողմից ընտրված անձինք, եկել ենք Հայաստան ու երկու օր է փորձում ենք հանդիպումներ կազմակերպել տարբեր քաղաքական գործիչների հետ՝ փորձելով հասկանալ, թե ինչ է կատարվում: Ավելի կոնկրետ ասած՝ մեզ հուզող հարցերի պատասխաններն ենք ուզում ստանալ:

-Արդյոք փարատվեցին ձեր ու նաեւ արցախցու մտահոգությունները երկօրյա հանդիպումներից հետո, քանի որ խաղաղության պայմանագիրը ըստ Ադրբեյջանի դրույթների՝ Արցախն Ադրբեյջանի կազմում ճանաչելն է:

-Մտահոգությունները կփարատվեն այն ժամանակ, երբ կտեսնենք փաստաթուղթ՝ հոգուտ Արցախի, իսկ նման փաստաթուղթ այսօր չկա: Ինչ էլ կա, լոկ հայտարարությունների մակարդակում է, ու, ցավոք սրտի, քաղաքական որեւիցե գործընթաց չի սկսվել Արցախի կարգավիճակի եւ ճակատագրի վերաբերյալ: Կրկնում եմ՝ բոլորիս մտահոգությունները կփարատվեն այն ժամանակ, երբ հստակ փաստաթուղթ կլինի՝ հոգուտ Արցախի:

-Այսինքն, Ստեփանակերտում շարունակվելու են հանրահավաքները:

-Անկեղծ ասած, այդ ամենը մենք չենք վերահսկում, դա ժողովրդի կամքն է: Ինքնաբերական հավաքներ են, որոնց մենք, միանշանակ, ողջունում ենք: Իմ կարծիքով դա կշարունակվի այնքան շամանակ, քանի դեռ արցախցին կզգա՝ կա դրա կարիքը:

-Իսկ ինչ կասեք արցախա-ադրբեյջանական սահմանների մասին: Ինչ իրավիճակ է այս պահին:

-Բնականաբար լարվածությունը նկատվում է նաեւ Արցախում, բայց համեմատելով, թե ինչ է կատարվում Հայաստանում սահմաններին, ապա համեմատության մեջ դիտարկելով կարող եմ ասել՝ ավելի հանգիստ է:

Ջրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՅԱՆԸ

ՎԻՃԱԿՆ ՕՐՀԱՍՍԱԿԱՆ Է

ՀԵՐԹԱԿԱՆ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՉ

Աժ մարդու իրավունքների ղապադմավորության եւ հանրային հարցերի մեծահասակ հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Միջազգային հանրության կողմից իրավադադարական մեխանիզմների գործարկումը դարձել է կենսական անհրաժեշտություն՝ կանխելու հայ ժողովրդի նկատմամբ Ադրբեյջանի եւս մեկ ցեղասպանություն»:



Մարդու իրավունքների պաշտպանությանը զբաղվող իմ միջազգային բոլոր գործընկերներին հերթական նամակներով ահազանգել եմ Ադրբեյջանի ռազմական ագրեսիայի, ՀՀ քաղաքացիական ենթակառուցվածքների եւ օբյեկտների, խաղաղ բնակչության նկատմամբ Ադրբեյջանի պատերազմական հանցագործությունների վերաբերյալ: Սեպտեմբերի 13-ից սկսած՝ բազմաթիվ գրություններ եմ հասցեագրել աշխարհի տարբեր կառույցների եւ գործիչների՝ ահազանգելով, թե ինչպես են 21-րդ դարում հայերը միայն հայ լինելու համար խոշտանգվում միջազգային հանրության աչքի առաջ, ինչպես են թիրախավորվում կանայք, երեխաները, տարեցները, հաշմանդամություն ունեցող ան-

ձինք, ինչպես է հայ խաղաղ բնակչությունը ստիպված լինում լքել իրենց տները, որպեսզի փրկեն իրենց կյանքը Ադրբեյջանի հրետակոծությունների պայմաններում: Ադրբեյջանի կողմից միջազգային իրավունքի, այդ թվում նաեւ՝ միջազգային հուճարական իրավունքի ոտնահարումներն այնքան ակնհայտ եւ փաստարկված են, որ միջազգային հանրության կողմից Ադր-

բեյջանի հանցագործությունների ուղղությամբ իրավաքաղաքական մեխանիզմների գործարկումը դարձել է կենսական անհրաժեշտություն:

Հարգելի միջազգային գործընկերներ, Ձեր հրատապ եւ գործնական քայլերը կարող են փրկել Ադրբեյջանի հերթական ցեղասպանությունը հայերի նկատմամբ: Վիճակն օրհասական է, գործե՛ք»:

ՄԱՐՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՆՈՐՄ

ՄԱՐՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՆՈՐՄ

«Զինվորական ծառայության մասին սահմանադրական նորմը հանել են վաճառքի 24 մլն դրամով: Երկու տարվա մեջ սա՛ է փոխվել բանակում»,- ArmLur.am-ի հետ զրույցում ասում է պաշտպանության նախկին նախարար Արտակ Զաքարյանը:

Ըստ նրա՝ մեկնաբանել 24 մլն-ի նախագիծը, որ ենթադրում է մոտ 60 հազար դուլար վճարել ու ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից, կնշանակի բանակը քանդելու հերթական մեխանիզմը մշակել:

ArmLur.am-ի դիտարկմանը, թե օրվա իշխանությունը նախկիններից եկած կաշառքով ազատվելու պրակտիկան է ցանկանում կնիքով ամրագրել, արձագանքում է, որ կաշառքով ազատվելու պրակտիկան օրինականացնելը ֆարս է: «Կաշառքի դեմ պետք է պայքարել, դատել, ոչ թե դա օրինականացնել: Չեն կարողանում դատել, այսինքն՝ ընդունում են, որ այսօր էլ կա այդ երեւոյթը: Կաշառակերներին 4.5 տարի չեն կարողանում զսպել, հիմա, փաստորեն, ստիպված օրինականացնում են այդ երեւոյթը: Եթե Իսրայելի Քեսետում (այդ երկրի խորհրդարանն է՝ հեղ.) որեւէ պատգամավոր նման նախագծով հանդես գար, ապա բառիս բուն իմաստով կդատափետվեր այն»,- ընդգծում է մեր զրուցակիցը:

ՎԵՐԱՀՄԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը գումար կստանա՝ կուսակցություններին աուդիտի ենթարկելու համար: Նշենք, որ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին է վերապահված կուսակցությունների՝ ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը: ArmLur.am-ը տեղեկացավ, որ կուսակցությունների եւ կուսակցությունների դաշինքների աուդիտորական ծառայությունների ձեռքբերման գումարը կազմում է 10 մլն 84 հազար դրամ:

Իսկ պարտադիր աուդիտի ենթակա կուսակցությունների աուդիտի պայմանագրի գները սահմանվել են հետևյալ կերպ. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն՝ 4 մլն 800 հազար դրամ, «Հանրապետություն» կուսակցություն՝ 810 հազար դրամ, «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն՝ 960 հազար դրամ, «Հայաստան դաշինք»՝ 3 մլն 514 հազար դրամ (որում ներառված են՝ «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը՝ 2 մլն 320 հազար դրամ, «Վերածնվող Հայաստան» կուսակցությունը՝ 1 մլն 194 հազար դրամ, իսկ մյուս կուսակցություններինը՝ 9 մլն 300 հազար դրամ, որից «Հայաստանի դեմոկրատական»՝ 1 մլն 170 հազար դրամ, «Մեր տունը Հայաստանն է»՝ 1 մլն 230 հազար դրամ, «Հայրենիք»՝ 1 մլն 455 հազար դրամ, «Ապրելու երկիր»՝ 1 մլն 485 հազար դրամ, «Հայաստանի Հանրապետական»՝ 3 մլն 120 հազար դրամ եւ «Լուսավոր Հայաստան»՝ 840 հազար դրամ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՊԵՏՔ Է ԴՈՒՐՍ ԳԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՆԳԻՍ Է

ՀԱՐՑԸ ԿԼՈՒԾՎԻ

Հայաստանի կառավարությունը որոշել է Ուկրաինայում տեղի ունեցող պատերազմական գործողությունների հետևանքով մշտական բնակության նպատակով ՀՀ տեղափոխված անձանց կենսաթոշակի հարցը լուծել: ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն առաջարկում է Ուկրաինայի՝ պետական իշխանության մարմինների՝ ժամանակավորապես իրենց լիազորությունները չիրականացնելու պատճառով կամ հարցում կատարելուց հետո՝ 3 ամսվա ընթացքում պատասխան չստանալու դեպքում, կենսաթոշակ նշանակող ստորաբաժնում կենսաթոշակի (Նպաստի) գործը Ուկրաինայից պահանջել, և վճարումը Հայաստանում շարունակել:

Կամ էլ անձին նոր հիմունքներով կենսաթոշակի կենսաթոշակ կամ նպաստ՝ հիմք ընդունելով նրա ներկայացրած փաստաթղթերը:

ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՄԵՐԺԵԼ ԷՐ

Դատավոր Դավիթ Թադևոսյանը դատի է տվել ԲԴԽ-ին: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ նա պահանջում է Բարձրագույն դատական խորհրդի 04.08.2022թ. ընդունված ԲԴԽ-6-Ո-249/2022 որոշումը՝ Պավել Դավիթի Թադևոսյանին Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար՝ առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակից հանելու մասով վերացնելու, և, որպես հետևանք, հայցվորին Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող առանձին դատավորների պաշտոնում նշանակվելու վերաբերյալ՝ ՀՀ Նախագահի առարկությունները չընդունելու մասին որոշումն ընդունված՝ այդ մասին ՀՀ Նախագահին իրազեկելով:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ դատավորները դուրս են եկել ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և ընդդեմ բարձրագույն դատական խորհրդի: Բան այն է, որ ՀՀ Նախագահի Վահագն Խաչատրյանը որոշ դատավորների մասով առաջխաղացման կամ հակակոռուպցիոն դատարանում դատավոր նշանակվելու գործընթացը մերժել էր: Օրինակ Նախագահականի մեր աղբյուրների փոխանցմամբ՝ որոշ դատավորների ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում դատավոր դառնալը մերժվել էր, քանի որ ԲԴԽ-ն նրանց դիմումները պատշաճ չէր ուղարկել: Ասել է թե՛ դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի եզրակացությունը դիմումում չէր եղել: Ուստի այդ եզրակացության պատճառով էլ Նախագահը դեմ էր եղել, որ այս դատավորները կարողանային իրենց ցանկալի դատարանում դատավոր նշանակվել: Արդյունքում էլ՝ դատավորները ընկել են դատարանի դռները:

ԻՆՔՆԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 16-ին՝ Առավոտյան 08:00-ի սահմաններում, ազգությամբ եզդի 16-ամյա Ազիզ Աթաջանը իրենց տան բակի երկաթյա ձողից պարանով կախվելու միջոցով ինքնասպանություն է գործել: Անմիջապես դեպքի վայր են մեկնել իրավապահներ. հանգամանքները պարզվում են:

Կառավարության երեկվա նիստի գլխավոր թեման Հայաստանի սահմաններում տեղի իրավիճակն էր: «Այսօրվա դրությամբ՝ մեր հաստատված զոհերի թիվը 135 է, բայց, ցավոք, մենք գիտենք, որ այս թիվը դեռևս վերջնական չէ, ու մենք նաև բազմաթիվ վիրավորներ», - նախ ցեղ Փաշինյանը: Պաշտպանության նախարար Սուրեն Պաղիկյանն իր հերթին ցեղ, որ օդերաշիվ իրավիճակն այս պահին գնահատվում է հարաբերական հանգիստ: Երեկ գիշերվա ընթացքում հրադադարի ռեժիմը դադարեցվել է:

«Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը հստակ է և աներկբա՝ Ադրբեջանի գինված ուժերի ներխուժած ստորաբաժանումները պետք է դուրս գան Հայաստանի ինքնիշխան տարածքից: Ընդհանուր առմամբ ուզում եմ ընդգծել, որ խոսքը ոչ միայն վերջին օրերի իրադարձությունների մասին է, այլև նախորդ տարվա մայիսի 12-ին հոգնավար հատվածում տեղի ունեցած ներխուժման: Հայաստանի Հանրապետությունն այս դիրքորոշումն է արձանագրել երեկ՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում տեղի ունեցած քննարկումների ժամանակ: Ըստ էության՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Հայաստանի դիմումի հիման վրա են քննարկումներ տեղի ունեցել: Երեկ երեկոյան ես ես մեկ հեռախոսազրույց եմ ունեցել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում նախագահող երկրի՝ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հետ, և պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ իրավիճակը պետք է շարունակի մնալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ուշադրության կենտրոնում», - շարունակեց Փաշինյանը, ապա խոսք տրամադրեց նաև ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզախանյան:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում տեղի է ունեցել հատուկ քննարկում՝ նվիրված մեզ հուզող հարցերին: Մեր նախաձեռնությամբ է տեղի ունեցել քննարկումը: Սա արդեն երկրորդ քննարկումն էր, թեև հանրությունը մեծապես տեղեկացված չէ այդ մասին: Երկու օր առաջ տեղի է ունեցել ես մեկ քննարկում՝ փակ ռեժիմով, և, ահա երկրորդը մեր պնդմամբ՝ բաց ռեժիմով, որպեսզի նաև ամբողջ աշխարհի



մարդկությունը կարողանա հետեւել մշտական, ոչ մշտական անդամ երկրների դիրքորոշումներին:

Քննարկման արդյունքներով փաստաթուղթ առաջով չի ընդունվել, բայց ուզում եմ հատուկ ընդգծել, որ սա որեւէ կերպ չպետք է նսեմացնի տեղի ունեցած քննարկման կարեւորությունը, որովհետեւ, այնուամենայնիվ, նույնիսկ առանց փաստաթղթի, ըստ էության՝ միջազգային հանրությունը շատ հստակ դիրքավորվել է հարցերի շուրջ: Ես հիմա կթվարկեմ Ձեր թույլտվությամբ: Եվ այսպես՝ ես հարկ չեմ համարում երկր-երկիր առանձին նշել, բայց երկրների ճշող մեծամասնությունն ընդգծել է ուժի կիրառման անթույլատրելիությունը, Հայաստանի սուվերեն տարածքի անձեռնմխելիությունը, միևնույն կերպով տեղի ունեցած դիրքեր վերադառնալու անհրաժեշտությունը, բազմիցս օգտագործվել է «ագրեսիա» եզրույթը: Այսինքն, շատ հստակ ընկալում կա, որ սա ագրեսիա է, ներխուժում է Հայաստանի տարածք, որ թիրախավորվել են քաղաքացիական ենթակառուցվածքներ, որ ներխուժողը պետք է վերադառնա ելման դիրքեր է այլև», - նկատեց նա:

«Այնուամենայնիվ, հարգելի գործընկերներ, ես կարծում եմ մենք պետք է արձանագրենք, որ իրադրությունը մնում է լար-

ված, և Անվտանգության խորհրդի ֆորմատով քննարկել ենք Հայաստանում ռազմական դրություն մտցնելու նպատակահարմարությունը և անհրաժեշտությունը և եկել ենք այն եզրակացության, որ այս պահին նման որոշման պետք է չգնանք: Բայց մյուս կողմից՝ մենք բազմաթիվ քաղաքացիներից առաջարկներ ենք ստանում, նաև կան քաղաքացիներ, ովքեր ասում են, որ ռազմական դրությանն ենք սպասում, որպեսզի մասնակցենք մեր երկրի ինքնիշխանության և տարածքային ամբողջականության պաշտպանությանը: Անվտանգության խորհրդի նիստում դա էլ ենք քննարկել և եկել ենք այն եզրակացության, որ եթե կան մարդիկ (հաստատ, կան մարդիկ), ովքեր ուզում են ներգրավված լինել այս փուլում, նրանք կարող են սովորական ընթացակարգով, կամավորաբար հիմքով դիմել գինվորական կոմիտարիատներ, և այդ խնդիրը կլուծվի: Առավել ես, որ հիմա նախկինում կայացրած որոշումների շրջանակներում եռամսյա հավաքների գործընթացը շարունակական է, ուժի մեջ է, և կան բոլոր օրենսդրական հիմքերը, որոշումները՝ քաղաքացիներին կամավորության հիմունքներով ներգրավելու ծառայության մեջ», - նշեց նա:

ՆԱԽՈՎ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՇԵՌԱՆԽՈՍԱԶՐՈՒՅՑ ԲԼԻՆՔԵՆԻ ՇԵՏ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի հետ:

Վարչապետը մանրամասներ է ներկայացրել Ադրբեջանի կողմից Հայաստանի ինքնիշխան տարածքի նկատմամբ սանձազերծված ագրեսիայի հետևանքով ստեղծված իրավիճակի վերաբերյալ: Նիկոլ Փաշինյանը նշել է, որ չնայած սահմանին հարաբերական հանգիստ է՝ իրավիճակը շարունակում է մնալ շատ լարված: Էնթոնի Բլինքենն իր ցավակցություններն է փոխանցել ռազմական գործողությունների հետևանքով զոհերի կապակցությամբ և վերահաստատել Միացյալ Նահանգների պատրաստակամությունը՝ նպաստելու խաղաղությանն ու երկխոսությանը: Զրուցակիցներն անդրադարձել են նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին ուղղված ՀՀ դիմումի շուրջ քննարկումներին: Վարչապետ Փաշինյանը ես մեկ անգամ ընդգծել է տեղի ունեցող վերաբեր-

յալ միջազգային հանրության համարժեք արձագանքի կարեւորությունը:

դրություն տանող վերջին դուրը», - ասել է Հռոմի պապը:

ԼՈՒԾՎԵԼ Է

Հռոմի պապ Ֆրանցիսկոսը կարծում է, որ Հայաստանի և Ադրբեջանի հարաբերություններում վերջին օրերին սրված իրավիճակը լուծվել է Ռուսաստանի շնորհիվ:

«Այժմ լարվածությունն Ադրբեջանի և Հայաստանի միջև որոշակիորեն թուլացել է, քանի որ Ռուսաստանը հանդես է եկել՝ որպես երաշխավոր», - մասնավորապես ասել է նա:

Հռոմի պապը նաև համոզված է, որ երկխոսությունն անհրաժեշտ է և պետք է միշտ պահպանվի որպես փոխըմբռնման և խաղաղության ճանապարհ:

«Երկխոսության հնարավորությունը պետք է տրվի բոլորին, քանի որ միշտ կա երկխոսության միջոցով ինչ-որ բան փոխելու հնարավորություն, երկխոսության ժամանակ կարելի է այլ տեսակետ ներկայացնել, այլապես կփակվեն դեպի խաղա-

ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱ

ԱՄՆ-ի հայկական համայնքի ներկայացուցիչները բողոքի ակցիա են անցկացրել Նյու Յորքում՝ Ադրբեջանի և Թուրքիայի ներկայացուցչությունների մոտ:

Ակցիայի մասնակիցները երթով շարժվել են դեպի Նյու Յորքում Ադրբեջանի, այնուհետև Թուրքիայի ներկայացուցչություն: Նրանք այդպիսով իրենց բողոքն են արտահայտել Ադրբեջանի կողմից Հայաստանի վրա հարձակման դեմ:

Երթի ընթացքում ակցիայի մասնակիցները Հայաստանի կողքին կանգնելու կոչ են հնչեցրել:

Երթի մասնակիցները պարզել են Ապրիլյան քառօրյա և 44-օրյա պատերազմների ընթացքում զոհված զինծառայողների լուսանկարներ, պարզել են՝ «Հեռացրեք Թուրքիային ՆԱՏՕ-ից», «Իմ հայրենիքը խաղաղություն է ուզում», «Շուշին Հայաստան է» և այլ գրություններով պատտառներ:

ՎԱՅՐԱԳՈՒԹՅՈՒՆ

ԿՏՐԵԼ ԵՆ ԿԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԻ ՈՏՔԵՐԸ

Հայաստանի սարածք ներխուժած ադրբեջանական ուժերը վայրագություններ են կատարել, մասնատել են կին զինծառայողին, կտրել ոտերը, մասները, մեղքերը նրան. այս ամենը վկայող աղագույցը՝ Տեսանյութը, ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի ղեկավար խոսքով ցույց տալ Զերմուկ այցելած դիվանագետներին:



Ճեպագրույցում ԳՇ պետը նրանց ուշադրությունը հրավիրեց Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումների, նրանց զինծառայողների վայրագությունների վրա: «Վայրագություններ են իրագործել մեր մարտական դիրքերում մեր զինծառայողների, այդ թվում՝ նույնիսկ կին զինծառայողների նկատմամբ»,-ասաց նա՝ հավելելով, որ այդ նկարները, տեսանյութը բջջային հեռախոսում ունի, ըստ ցանկության կարող է ցուցադրել դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներին:

Անրադառնալով այս ամենին՝ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը հանդես է եկել կոչով, որը ներկայացնում էնք ստորև:

ԳՇ պետը գգուշացրեց սակայն, որ այնտեղ կան այնպիսի վայրագություններ, որ մարդիկ նույնիսկ կարող է չկարողանան դիտել:

«Հայկական մամուլի միջոցներով եւ սոցիալական ցանցերով ակտիվ տարածվում է զոհված հայ կին զինծառայողի կտտանքների ենթարկված մարմինը պատկերող տեսանյութը, որը ծայրահեղ ցինիզմով արվել է այդ ծանր հանցանքը ենթադրաբար կատարած՝ ադրբեջանցի զինծառայողի կողմից: Այդ տեսանյութը, զինծառայողի սեռն ու էթնիկ պատկանելիությունը թիրախավորելով ու արատավորելով, ակտիվ տարածվում է ադրբեջանական մեդիա տիրույթներում՝ առաջացնելով ադրբեջանցի օգտատերերի «հիացմունքն ու գովեստը»:

ու սոցիալական ցանցերում այդ տեսանյութի տարածումը լրագրողների ու օգտատերերի կողմից: Կին զինծառայողն ու նրա ընտանիքի անդամներն ունեն չթիրախավորման ու անօտարելի արժանապատվության նկատմամբ հարգանքի իրավունք՝ որպես յուրաքանչյուրիս իրավունքների եւ ազատությունների անքակտելի հիմք:

Դիվանագիտական ներկայացուցիչները խնդրեցին ներկայացնել, թե կոնկրետ ի՞նչ դաժանությունների են դիմել ադրբեջանական ուժերը: ԳՇ պետը խոստացավ ճեպագրույցի ավարտից հետո ցույց տալ ապացույց հանդիսացող տեսանյութը: «Բառեր չեմ գտնում նկարագրելու, թե ինչպես են նրանք մասնատել կին զինծառայողին, կտրել են ոտերը, մատները, մերկացրել, վայրագության վերջին աստիճանն է»,-ասաց Ասրյանը:

«Հարգելի՛ հայրենակիցներ, Այս արարքները փաստագրված ու վերլուծված են մեր կողմից, ներկայացվելու են միջազգային մասնագիտացված կազմակերպություններին, բացի այդ, Նշված նյութերը նաեւ մեր իրավապահ մարմինների ընկույթային առարկան են:

Հարգելի՛ հայրենակիցներ, Այս արարքները փաստագրված ու վերլուծված են մեր կողմից, ներկայացվելու են միջազգային մասնագիտացված կազմակերպություններին, բացի այդ, Նշված նյութերը նաեւ մեր իրավապահ մարմինների ընկույթային առարկան են:

ԳՇ պետը շեշտեց՝ ոչ մի պետության ռազմական ուժ, զորք, ստորաբաժանում, զինծառայող իրավունք չունի հակառակորդի նկատմամբ նմանատիպ վայրագությունների դիմել: Դա միջազգային մարդասիրական իրավունքի կոպիտ խախտում է:

Կոչ եմ անում լրագրողներին, տարբեր սոցիալական ցանցերի օգտատերերին, հեռացնել իրենց հրապարակումներից, էջերից, հարթակներից համանման տեսանյութերը: Հարգեք մեր զոհված զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների արժանապատվությունը: Մի՛ օգնեք ադրբեջանական ատելության քարոզչամեթոդային:

Կոչ եմ անում լրագրողներին, տարբեր սոցիալական ցանցերի օգտատերերին, հեռացնել իրենց հրապարակումներից, էջերից, հարթակներից համանման տեսանյութերը: Հարգեք մեր զոհված զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների արժանապատվությունը: Մի՛ օգնեք ադրբեջանական ատելության քարոզչամեթոդային:

Պատերազմական հանցագործությունները, ըստ նրա, իրականացվել են հարձակման բոլոր ուղղություններով:

Խոնարհում մեր տղամարդ ու կին հերոսներին»:

ԼՈՒՐԵՐ

ՈՒՋՄԱԳԵՐԻՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՅՈՒՄ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գերիների տեսանյութերի մասով հարցում է արել Ադրբեջանին՝ սեպտեմբերի 13-ի դրությամբ նույնականացված 1 գերու եւ տեսանյութերում երեւացող ճնշողականացված գերիների մասով ժամկետ տալով մինչեւ սեպտեմբերի 22-ը: Այս մասին տեղեկացրել է Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցիչը:

Գերիների տեսանյութերի մասով ՄԻԵԴ-ը հարցում է արել Ադրբեջանին, արդեն սեպտեմբերի 13-ի դրությամբ նույնականացված 1 գերու եւ տեսանյութերում երեւացող մնացած ճնշողականացված գերիների մասով (գտնվելու վայրի, պահման պայմանների, առողջական վիճակի մասին)՝ ժամկետ տալով մինչեւ սեպտեմբերի 22-ը:

կատվել, մինչեւ 7,5 կմ խորությամբ: Այս մասին հայտնել է ԶՈՒ ԳՇ պետը՝ դիվանագիտական ներկայացուցիչների հետ հանդիպմանը:

ՄԻԵԴ 39-րդ կանոնի մասով Դատարանը սեպտեմբերի 16-ին որոշում է կայացրել:

«Հայ ռազմագերիների նույնականացման աշխատանքները շարունակում ենք գործընկեր կառույցների հետ, որոնց արդյունքները պարբերաբար լրացնում ենք Եվրոպական դատարան ուղարկված մեր դիմումներով»,-ասված է հայտարարությունում:

«Այդ մխրճումները Ադրբեջանի ԶՈՒ կողմից իրականացվել են խմբերով, ջրկատներով, եւ դրանց որոշակի խմբեր, ջրկատներ գտնվում են մեր ստորաբաժանումների հսկողության տակ, նաեւ շրջափակումների մեջ»,- Նշել է նա:

խաղաղ բնակավայրերի թիրախավորման արգելքի պահանջի մասով ՄԻԵԴ-ը Նշել է, որ 2020 թվականի սեպտեմբերի 29-ի որոշումը ուժի մեջ է եւ տարածվում է այս դեպքերի վրա (2020 թվականի որոշմամբ՝ կողմերին կոչ էր արել պահպանել Կոնվենցիայի պահանջները, նաեւ գերիների մասով): Որոշմամբ ՄԻԵԴ-ը Նշել է, որ ցանկացած շեղում կարող է հանգեցնել այս մոտեցման փոփոխության:

ՀԱՐՉԱԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Եթե մենք գտնվում ենք այստեղ, ապա դա այն ուղղությունն է, որտեղ հակառակորդը իր հարձակողական գործողությունների արդյունքում ունեցել է որոշակի հաջողություններ եւ մխրճվել ՀՀ ինքնիշխան տարածք 8,5 կմ լայնությամբ ճա-

Էդվարդ Ասրյանի խոսքով՝ ներկա դրությամբ Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումների խմբերը գտնվում են Զերմուկ քաղաքի մատույցներից 4,5 կմ հեռավորության վրա:

«Զերմուկ քաղաքում հարված է հասցվել նաեւ ճոպանուղուն, որը, որպես առողջարանային կենտրոն, ունենալով տարբեր պետություններից, երկրներից այստեղ հանգստացող անձնակազմ, նաեւ ճոպանուղուն հարվածի հետեւանքով՝ ներկա դրությամբ տարբեր պետություններից, երկրներից ներկայացուցիչներ չկան:

Ճոպանուղու տարածքում մանկական հրապարակներ կան, քանի որ տարիաւում իրականացված չէր, ժողովուրդը, եւ տարբեր երկրներից ներկայացուցիչներ քաղաքում էին»,- Նշել է նա:

ԼՈՒՐԵՐ

ԳԱՄԱԿԱՆ ԱՃՈՒՐԴ

Կառավարությունն իր երեկվա նիստում որոշեց ՀՀ ԱԱԾ-ին ամրացված, պետական սեփականություն հանդիսացող Երեւանի Պարոյր Սեւակի փողոց 5/1 հասցեում գտնվող 6832.2 քառ. մետր մակերեսով հասարակական շենքը եւ դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար հատկացված 0.8083 հեկտար մակերեսով հողամասը օտարել դասական աճուրդով:

Աճուրդով օտարման ենթակա գույքի մեկնարկային գինը սահմանվել է գնահատված արժեքի 75 տոկոսի չափով՝ 1 944 367 500 ՀՀ դրամ, անշարժ գույքի գնահատված շուկայական արժեքում ներառված, հատկացված հողամասի գնահատված շուկայական արժեքը՝ 1 579 135 000 դրամ. հատկացված հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքը՝ 309 497 262 դրամ,

Գնորդը պարտավոր է վճարել նաեւ Գույքի արժեքի որոշման դիմաց գանձվող գումարը՝ 1 726 860 ՀՀ դրամը:

ԳԻՄՈՒՄՆԵՐ Է ՆԵՐԿԱՅԱՅՐԵԼ ՄԻԵԴ

Հայաստանը վերջին երկու օրվա ընթացքում Մարդու իրավունքների եվրոպական դատարան է ներկայացրել Մի քանի իրար համադրող դիմումներ՝ Ադրբեջանի նկատմամբ միջանկյալ միջոցներ կիրառելու պահանջով:

Այդ մասին կառավարության նիստում ասաց ՀՀ-ում ՄԻԵԴ ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը:

Նրա խոսքով՝ արդեն պատասխաններ ստացվել են: «Խոսքը վերաբերվում է նաեւ գերեզմանային հրավումների երաշխավորմանը: Այս պահի դրությամբ հավաքագրվում են վնասների հետ կապված ավելի լայնամասշտաբ ապացույցներ, որոնք մեր ընթացիկ տարբեր միջազգային իրավական գործընթացների շրջանակներում ներկայացնելու ենք»,-ասաց նա:

Նա Նշեց, որ մարդու իրավունքների խախտումների եւ պատերազմական հանցագործությունների դեպքերի, ինչպես նաեւ քաղաքացիական օբյեկտների վնասվելու ու միջազգային մարդասիրական իրավունքի խախտումների հետ կապված արդեն իսկ բոլոր պատկան, իրավասու մարմինների հետ աշխատում են:

ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանն էլ հավելեց, որ արդեն իսկ հարուցված են քրեական գործեր կան Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության կողմից ադրեսիայի ակտ իրականացնելու, ինչպես նաեւ միջազգային մարդասիրական իրավունքի կոպտագույն խախտումների վերաբերյալ փաստեր:

«Լայնածավալ քննչական գործողություններ են այս պահին տեղի ունենում, որոնց մասին քննչական կոմիտեն հանդես կգա լրացուցիչ հայտարարությամբ»,-ասաց նա:

● Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 15-ից 16-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 48 դեպք, որից 3-ը՝ նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԵՂԱԳՐԱՆՔԸ ՓՈԽԵԼ ԵՆ

2019թ. հուլիսին քննչական կոմիտեն հայտարարություն տարածեց, որ 2019 թվականի հուլիսի 17-ին՝ ժամը 18-ի սահմաններից սկսած, մի խումբ անձինք, ապօրինի ծառահատումների դեմ պայքարի խտացման հետ կապված իրենց դժգոհություններն արտահայտելու նպատակով՝ փակել են Հայաստան-Վրաստան միջպետական ճանապարհի՝ Իջեան քաղաքի Երեանյան ու Իջեանյան փողոցների հատման խաչմերուկի հատվածը. ժամը 20:30-ի սահմաններում մի խումբ անձինք, խուլիգանական դրոշմներով, դիտավորությամբ կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով Իջեան քաղաքի բնակիչների եւ երթելուության մասնակիցների նկատմամբ՝ բղավել, հայհոյել են, վնասել նշված խաչմերուկում գտնվող հասարակական տրանսպորտի կանգառի թիթեղյա ծածկը, գործադրել բռնություն: ՔԿ Տավուշի մարզային քննչական վարչությունում հարուցվել էր քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով, 316-րդ հոդվածի 1-ին մասով եւ 316-րդ հոդվածի 2-րդ մասով: Մի խումբ անձանց կողմից որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիգանություն կատարելու կասկածանքով ձերբակալվել էր 13 անձ, եւս 6 անձի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել էր ստորագրություն՝ չհեռանալու մասին: 2020թ. հոկտեմբերի 28-ից Տավուշի մարզի առաջին աստիճանի դատարանում ընթանում է թվով 20 անձի՝ Անդրանիկ Դոյանի, Անդրանիկ Սահակյանի, Անտոն Օթարյանի, Արտուշ Մատիսյանի, Գարսիկ Սիմոնյանի, Էդիկ Ափիսյանի, Էրիկ Ափիսյանի, Էրիկ Սահակյանի, Թաթև Դոյանի, Միքայիլ Բաղդամյանի, Մովսես Քարտաշյանի, Նարեկ Մարգարյանի, Ջիվան Ափիսյանի, Ռուբիկ Էդիսյանի, Սասուն Սիմոնյանի, Վահագն Ղուկասյանի, Վահե Ղուկասյանի, Վահրամ Ղուկասյանի, Վահրամ Սիմոնյանի, Տիգրան Սարգսյանի, Արթուր Մարգարյանի դատավարությունը: Նրանք բոլորը մեղադրվում են ՀՀ քրեական օրենսգրքի 316 հոդվածի 1-ին մասով («Իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավոր ազգականի նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ»): Նրանց նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը եւ գրավը: Մեղադրանքը դատարանում պաշտպանում է ՀՀ գլխավոր դատախազությունը:

Վերոհիշյալ անձանց կողմից խուլիգանություն չի՞ եղել, եթե խուլիգանություն չի եղել, ինչո՞ւ ՀՀ քննչական կոմիտեն հայտարարություն էր տարածել այդ մասին, իշխանության ներկայացուցչի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությունը հետո ո՞նց դարձավ ոչ վտանգավոր բռնություն:

ՈՍՎԻՍ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՐՎԱԾՆԵՐ

ՄԻՐՃՎԵԼ Է ՀՀ ԻՆՔՆԻԾԻՄԱՆ ՏԱՐԱԾՔ

Երեկ սեպտեմբերի 16-ին, Հայաստանում հավասարազրկված դիվանագիտական ներկայացուցչությունների եւ միջազգային կազմակերպությունների ղեկավարների հետ ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի ղեկավար Արյանը այցելել է Ջերմուկ, որտեղ բազմաթիվ լրագրողների հետ զրույցում ներկայացրել են մանրամասներ՝ ֆաղափում ստեղծված իրավիճակի վերաբերյալ:

«Մենք Ջերմուկում անմիջապես ձեռնարկեցինք կտանք այն վայրերը, որտեղ հակառակորդը հասցրել է հարվածներ. հարվածների ժամանակ կիրառել է ինչպես ռեակտիվ հրետանի, այնպես էլ հարվածային ԱԹՍ-ներ: «Ջերմուկը՝ որպես առողջարանային կենտրոն, ունի տարբեր պետություններից այստեղ հանգստացող անձնակազմ, սակայն ճոպանուղուն հարվածելու հետեանքով՝ ներկայումս Ջերմուկում այլ երկրներից ներկայացուցիչներ չեն մնացել:»

Ճոպանուղու տարածքում մանկական հրապարակներ կան, քանի որ տարիսում իրականացված չէր Ջերմուկից, Ժողովուրդը եւ տարբեր երկրներից հանգստացողներ գտնվում էին քաղաքում», - ասաց Էդվարդ Արյանը:

«Հարված է հասցվել նաեւ ճոպանուղուն, որը՝ որպես առողջարանային կենտրոն, ունենալով տարբեր երկրներից հանգստացող մարդիկ, այս պահին իր ներսում չունի այլ երկրներից ներկայացուցիչներ: Ճոպանուղու տարածքում մանկական հրապարակներ կան:»

Ադրբեջանի ՋՈՒ ստորաբաժանումները, միանշանակ, որպես նշանակետեր ընտրել են նաեւ քաղաքացիական ենթակառուցվածքները, որովհետեւ Ջերմուկը միջազգային առողջարանային կենտրոն է եւ թիրախավորելով քաղաքի ենթակառուցվածքները՝ Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը հետապնդել է նաեւ նպատակ՝ լուրջ տնտեսական հարվածներ հասցնել Հայաստանին», - ասաց նա:

Ջերմուկը այն ուղղությունն է, որտեղ հակառակորդը իր հարձակումների արդ-



յունքում ունեցել է որոշակի հաջողություններ եւ մարտվել Հայաստանի ինքնիշխան տարածք 8.5 կիլոմետր լայնության ճակատով, մինչեւ 7.5 կիլոմետր խորությամբ:

«Այդ մարտումները կատարվել են խմբերով, ջոկատներով, որոնցից որոշները գտնվում են մեր ստորաբաժանումների անմիջական հսկողության տակ, նաեւ շրջափակումների մեջ: Ներկա դրությամբ՝ Ադրբեջանի ՋՈՒ ստորաբաժանման խմբերը գտնվում են Ջերմուկից 4.5 կիլոմետր հեռավորության վրա», - նշեց նա՝ հավելելով, որ մինչեւ ռազմական գործողությունների սկսվելը հակառակորդը եղել է Ջերմուկից 11-12 կիլոմետր հեռավորության վրա:

«Մյուս 5 ուղղություններում հակառակորդի ՋՈՒ ստորաբաժանումների հաջողությունները չեն կարող համեմատվել Ջերմուկի ուղղությամբ մարտման խորությունների հետ, սակայն նաեւ 1-2 կմ մարտման խորություններ՝ Ներքին Հանրապետության, որոշակի դիրքային առավելություն ձեռք են բերել Շորժայի ուղղությամբ: Մյուս հատվածներում մեզ հաջողվել է հակառակորդին հետ շարժել: Իշ-

խանասարի ուղղությամբ մոտ կես կմ խորությամբ հաջողություն են ունեցել», - ասաց ԳՇ պետը:

Ոչ թե հակառակորդը ամբողջ ճակատով հասել է Ջերմուկի մատուցներ, այլ մի խումբ կտրված իր ստորաբաժանումներից գտնվում է այդ բլրի գագաթի վրա:

«Կենսունակության տեսակետից, եթե այդ խմբին սնուցում չլինի՝ թե՛ սննդով, թե՛ ջրով, հատուկ ստորաբաժանում չլինի, ապա մի քանի օրվա ընթացքում նրանց ռեսուրսները լրիվ կսպառվեն եւ ստիպված կլինեն այդտեղից դուրս գալ: Այդ խումբը կողքերից շրջափակված է մեր ստորաբաժանումների կողմից: Այսինքն, մարտավարական իրադրությունը կայուն է, եւ մեր հմուտ գործողությունների արդյունքում՝ այդ խումբը այդտեղից կհեռանա: Թույլ չենք տա, որ ապահովվի նրանց կենսունակությունը, մեքենաների շարժ դեպի մեր տարածք չի լինի: Այդ խումբը հետ կքաշվի, կմիանա իրենց հիմնական ստորաբաժանումներին, որոնք Ջերմուկից գտնվում են 7-8-10 կմ հեռավորության վրա», - ասաց նա՝ հավելելով, որ այդ ջոկատը կարող է լինել 10-12 հոգի, ոչ ավելի:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿՈՉ

ՋԵՐԾ՝ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ

2022 թվականի սեպտեմբերի 12-ի լույս 13-ի գիշերը Հայաստանի Հանրապետության միջազգայնորեն ճանաչված ինքնիշխան սահման Ադրբեջանի կողմից ենթարկվել է ռազմական ագրեսիայի: Հայաստանի Հանրապետությունը փաստացի գտնվում է դաժնորեն իրավիճակում. Ձինված ուժերը դեռությամբ սարածային ամբողջականությունն ու սահմանների անձեռնմխելիությունը դաժնորեն համար դայֆար են մղում դաժնորեն դաժնորեն:

Այս իրավիճակում Կառավարության անդամները, նաեւ ԱԺ մեծամասնության որոշ պատգամավորներ պարբերաբար խոսում են տեղեկատվական անվտանգության, ՋԼՄ-ների գործունեության՝ իրավիճակին համապատասխան աշխատանք ծավալելու մասին, սակայն այդ ուղղությամբ որեւէ հստակ քայլ չի կատարվել, թերեւս, բացառությամբ, Տիկտոկ սոցիալական ցանցի մասնակի արգելափակումը:

Նկատի ունենալով, որ մեկ առանձին սոցցանցի մասնակի արգելափակումը չի կարող էական նշանակություն ունենալ ապատեղեկատվության, անհարկի, կեղծ օրակարգեր շրջանառող լրատվական հոսքերի կանխման եւ իրավիճակից բխող խնդիրների մասին կարելու տեղեկատվության տարածման վրա, կոչ ենք անում ՋԼՄ-ներին՝ գերծ մալ ստեղծված իրավիճակին ոչ համարժեք, անկարելու իրադրությունների, սոցցանցերում հայտնի առանձին անձանց (այդ թվում՝ բլոգերների) գործունեության, անձնական կյանքի վերաբերյալ պատմությունների լուսաբանումից, ինչպես նաեւ՝ երկրում ստեղծված ռազմական սպառնալիքի՝ փաստացի պատերազմի հետ առնչություն չունեցող, հասարակությանը կարելու տեղեկատվությունից շեղող որեւէ գործընթացի լուսաբանումից:

Ստեղծված իրավիճակի հետ աղերս չունեցող տեղեկատվությունն արդյունքում շեղելու է ուշադրությունն ամենակարեւորից՝ թթացնելով հասարակության ինքնապաշտպանության բնագրը:

ՋԼՄ-ների մեր բոլոր գործընկերներին կոչ ենք անում գործել փաստացի պատերազմական իրավիճակներին հատուկ կանոնների խստագույն պահպանմամբ, տարածել բացառապես հավաստի, բազմակի ստուգված տեղեկատվություն՝ առաջնորդվելով որեւէ պարագայում զինված ուժերի մարտունակությանը չվնասելու սկզբունքով եւ առաքելությամբ: Այս պայմաններում մեզ պետք է առաջ մղի ոչ թե մեր մասնագիտական, այլ բանակի, զինված ուժերի հաջողությունն ու դրան նպաստելու գործելակերպը:

ՋԼՄ ներկայացուցիչներին հորդորում ենք նաեւ օգտագործել իրենց օտարերկրյա գործընկերների հետ մասնագիտական եւ անձնական կապերը՝ Ադրբեջանի սանձազերծած ագրեսիայի վերաբերյալ հավաստի ու համակողմանի տեղեկատվությունն արտաքին լսարանին հասցնելու եւ միջազգային հանրությանը մեր երկրի նկատմամբ կատարվողին հաղորդակից դարձնելու նպատակով:

Հայաստանի ժողովուրդների միություն

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 18 ՃՏՊ. 2 մարդ զոհվել է, 25-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ

2023/2024

ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

ՀՀ կառավարության որոշմամբ՝ հաստատվել է բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի ու անընդհատ եւ ինտեգրացված կրթական ծրագրերով (առկա, հեռակա) 2023/2024 ուսումնական տարվա մասնագիտությունների եւ ընդունելության քննությունների ցանկը:

Այս մասին տեղեկացրին ՀՀ ԿԳՄՍ նախարարության հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչությունից, գիտելիքների ստուգման գործընթացն իրականացվում է միասնական մոտեցմամբ. անկախ բուհի կարգավիճակից՝ պետական եւ ոչ պետական հաստատությունների բոլոր դիմորդները հանձնում են ընդունելության առկա 2 քննություն: Կան մասնագիտություններ, որոնց համար սահմանվել են կամընտրական քննություններ՝ դիմորդներին հնարավորություն տալով իրենց ցանկությանը ընտրել քննական առարկան:

Ըստ ընդունված որոշման՝ կանոնակարգվել են բուհերում նույն մասնագիտության (կրթական ծրագրի) համար ընդունելության միասնական չափանիշների սահմանումը եւ մուտքային պահանջների համապատասխանությունը՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության որոշմամբ տվյալ մասնագիտության համար շրջանակարտին շնորհվող համապատասխան որակավորումը:

Ըստ այդմ՝ նույն մասնագիտության դիմորդները պետք է հանձնեն ընդունելության նույն քննությունները՝ անկախ ընտրած բուհից:

Նշենք, որ 2023/2024 ուստարվա դիմորդներն ընդունելության միասնական քննություններ կարող են հայտագրել եւ հանձնել 2 անգամ: Առաջին փուլում դիմումների հայտագրումը կիրականացվի այս տարվա դեկտեմբերի 15-ից մինչեւ դեկտեմբերի 25-ը, իսկ քննությունները կանցկացվեն հաջորդ տարվա հունվար-փետրվար ամիսներին (հունվարի 15-ից մինչեւ փետրվարի 15-ը):

Երկրորդ փուլի հայտերն ընդունվելու են 2023 թվականի ապրիլի 15-ից մինչեւ մայիսի 10-ը, իսկ քննությունները կանցկացվեն հունիսի 1-ից հուլիսի 10-ն ընկած ժամանակահատվածում:

ՀԻՄՆԱՆՈՐՈՔՈՒՄՆ ԱՎԱՐՏՎԱԾ Է

Համալսարանական հիվանդանոցի մուտքային մասնաշենքի՝ ձախակողմյան հատվածի առաջին հարկի հիմնանորոգման աշխատանքներն ավարտվել են:

Շենքային պայմանների ընդլայնման անհրաժեշտությունն առաջացել էր 44-օրյա պատերազմից հետո՝ Զինվորի տանը բուժվող զինվորների քանակի ավելացմամբ պայմանավորված: Առաջին հարկում, որտեղ նախատեսվում է իրականացնել վերականգնողական բուժում, զինվորները հնարավորություն կունենան ֆիզիոթերապիայի եւ այլ տեսակի բուժումներ ստանալու:

Նոր բաժանմունքի հիմնանորոգման համար բարերար Միքայել Վարդանյանը տրամադրել է 120 մլն դրամ:

ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Գործադիր ընդունել է որոշում, որով նախատեսվում է իրականացնել մի քար կրթական եւ մշակութային հաստատությունների շինարարական աշխատանքների կատարման, նախագծման եւ գույքային հազեցվածության աղահոլում: Այդ նպատակի համար նախատեսվում է ղեկավարելու կատարել 146,413.9 հազար դրամի վերաբաշխում: Նախատեսվում է գումար հատկացնել՝ Գյումրու «Ֆոնոն» վարժարանի ջեռուցման համակարգի սեղադրման, Երևանի N 9 արհեստագործական դեղատնային ուսումնարանի դասուհանների և դռների փոխարինման, Ալ. Մոլեդիսյանի անվան օդերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի սանիթի նորոգման, Երևանի Բ. Ժամկոչյանի անվ. թիվ 119 ավագ դպրոցի արտաքին կոյուղու ցանցի կառուցման համար: Նախատեսվում է նաեւ գույքով աղահոլել Մ. Խոսեֆյանի անվան թիվ 143 հիմնական դպրոցը, Ալ. Մոլեդիսյանի անվան օդերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնը: Գումար կհատկացվի նաեւ Մոս Մարգարյանի անվան համազգային թատրոնի ՄԱՀ-ի գծով հարկային դարձվորությունների մարմանը:



Ցանց համար մատչելիության, ներքին հարդրակցման ուղիների (ջրամատակարարման, էլեկտրամատակարարման, գազամատակարարման, ջեռուցման), օդափոխության, օդորակման, տեսահսկման համակարգերի կառուցման/հիմնանորոգման, տարածքի բարեկարգման, գոյություն ունեցող շենքի եւ շինության հատակագծային լուծումների արդիականացման եւ միջազգային չափանիշներին համապատասխան բարձրորակ հարդարման միջոցառումներ եւ այլն:

Կառավարության որոշմամբ՝ կմիաձուլվեն Հայաստանի պարի պետական անսամբլը, Հայաստանի պարավետի «Բարեկամություն» պետական համույթը եւ Հայաստանի պարավետի «Թ. Ալթունյանի անվան երգի-պարի պետական համույթը»՝ վերականգնվելով «Ժողովրդական երաժշտության եւ պարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի: Նորաստեղծ ՊՈԱԿ-ի

կազմ կընդգրկվեն նաեւ ժողովրդական ժանրում մշակութային գործունեություն ծավալող եւ 3 ստեղծագործական խումբ, որոնք այժմ գործում են Հայաստանի պետական ֆիլիարմոնիայի ներքո՝ Հայաստանի ազգային նվագարանների նվագախումբը, Հայաստանի գուսանական եւ ժողովրդական երգի պետական համույթը եւ Մարո Մուրադյանի անվան «Ալունք» ազգագրական համույթը: Արդյունքում՝ 6 մշակութային կազմակերպությունների համար կստեղծվեն աշխատանքային եւ ստեղծագործական բարենպաստ պայմաններ, ինչն էլ իր հերթին կնպաստի արտաբյուջետային միջոցների աճին, պետական ֆինանսավորման արդյունավետ կիրառման ապահովմանը: Միաձուլման արդյունքում հնարավոր կլինի նաեւ մեկտեղել եւ կենտրոնացնել ինչպես մասնագիտական, այնպես էլ ֆինանսական ռեսուրսները:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՅ-ՄԼՈՎԱԿՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Գործադիրը հավանություն է սվել 2022 թ. ապրիլի 8-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Սլովակիայի Հանրապետության կառավարության միջև սիստեմական համագործակցության մասին» համաձայնագրի վավերացնելու մասին» ՀՀ օրենքի նախագծին:

Համաձայնագիրը հնարավորություն է ընձեռում իրավահավասարության եւ փոխշահավետության հիման վրա՝ երկու երկրների միջև զարգացնել եւ խորացնել երկարատեւ տնտեսական հարաբերություններ այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են արդյունաբերությունը, զբոսաշրջությունը, էներգետիկան, գյուղատնտեսությունը եւ անտառային տնտեսությունը, փոքր եւ միջին ձեռնարկատիրությունները, տրանսպորտն ու ենթակառուցվածքները, շրջակա միջավայրի պաշտպանությունը, տեղեկատվական եւ հաղորդակցման տեխնոլոգիաները, թվայնացումը եւ այլն: Համաձայնագիրն

ուղղված է երկու երկրների միջև փոխշահավետ համագործակցության զարգացմանը, տնտեսական կապերի ընդլայնման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, գործարար ակտիվության բարձրացմանը, երկու երկրների տնտեսական համագործակցության ասպարեզում առկա ներուժի օգտագործմանը: Ըստ այդմ՝ նախատեսվում է փոխշահավետ համագործակցության զարգացումն ու դիվերսիֆիկացումը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող տնտեսական բոլոր ոլորտներում: Համաձայնագրով նախատեսվում է նաեւ հայ-սլովակյան տնտեսական համագործակցության հարցերով համատեղ հանձնաժողովի ստեղծումը՝ երկրորդ տնտեսական համագործակցությունը համակարգելու եւ խթանելու նպատակով:

Հավանություն է տվել 2022 թ. հունիսի 10-ին Նուր-Սուլթանում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության շրջանակում բժշկական արտադրատեսակների (բժշկական նշանակության արտադրատեսակների) եւ բժշկական տեխ-

նիկայի) շրջանառության միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը հաստատելու մասին» Հանրապետության նախագահի հրամանագրի նախագծին: Եվրասիական տնտեսական միության շրջանակում առողջապահության բնագավառում բազմակողմ համագործակցությունը հետաքրքրություն է ներկայացնում փոխշահավետ գործակցության հաստատման տեսանկյունից, որը կօգնի կողմերի միջև համագործակցությունը զարգացնել առողջապահության կազմակերպման, բժշկական նշանակության արտադրատեսակների եւ բժշկական տեխնիկայի շրջանառության, ինչպես նաեւ վերջիններիս գրանցման գործընթացի դյուրացման տեսանկյունից: Արձանագրությամբ ներկայացված դրույթներով՝ նախատեսվում է ակտիվ համագործակցություն կողմերի միջև, ինչը ենթադրում է առողջապահական ծառայությունների մակարդակի բարձրացում:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԻՆՉՈՒ ԵՆ ԼՈՒՐ

ՌՈՒՄԱՍՏԱՆԱԲՆԱԿ ԸՄՅ ԸՄՅՏՆԻՆԵՐ

Այս ծանր օրերին Հայաստանում դասերագմական իրավիճակով դայմանավորված իրենց մտահոգությունն են հայտնել և միջազգային կառույցներին կոչով դիմել աշխարհում հայտնի հայեր, և ոչ միայն՝ փորձելով անհարձ աշխարհի ուսադրությունը հրավիրել Հայաստանի վրա: Հայաստանում կասարվող ծայրահեղ լարված դրությանը չեն անդադարձել ռուսաստանաբնակ մեր հայտնի հայրենակիցները:


ArmLur.am-ը ստորեւ ներկայացնում է նրանց:

Այս օրերին քար լռություն են պահպանել և Ադրբեջանի մասին ոչ մի դատապարտող գրառում չեն արել՝ հայտնի դիմահարդար Գոհար Ավետիսյանը, դերասան, հումորիստ Միխայիլ Գալուստյանը, մոդել Կարինա Գալուստյանը, հումորիստ Գարիկ Մարտիրոսյանը:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 13-ին՝ ժամը 00:05-ից, Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները Վարդենիսի, Սոթքի, Արտանիշի, Իշխանասարի, Գորիսի և Կապանի ուղղություններով հրետանային միջոցներից, խոշոր տրամաչափի հրաձգային զինատեսակներից սկսել են ինտենսիվ կրակ վարել հայկական դիրքերի ուղղությամբ:

Նշենք, որ համացանցում օգտատերերը և հայկական շոուուրիզմի ներկայացուցիչները բուռն քննադատության են ենթարկում նրանց:

ԼԻՊԱ ԵՂԻԱԶՈՐՅԱՆ



ԼՈՒՐԵՐ

ՆՎԵՐ ԸՄՅ ԶԻՆՎՈՐԻՆ

Երեւանի «Փյունիկ»-ի գլխավոր մարզիչ Եղիշե Մելիքյանը Կոնֆերենցիաների լիգայի երկրորդ տուրում «Ալուվան»-ի դեմ խաղում տոնած հաղթանակը նվիրում է սահմանին կանգնած հայ զինվորին:

«Այս հաղթանակը նվիրում եմք մեր զինվորներին: Տղաներ, մենք ձեզ հետ ենք: Մենք կփորձենք ինչ-որ դրական բան փոխանցել հայ ազգին: Միասնական պետք է լինենք տխրության և ուրախության պահերին», -խաղից հետո լրագրողների հետ հանդիպման ասել է Մելիքյանը: Անդրադառնալով խաղին՝ մասնագետը շեշտել է, որ ճիշտ վերլուծություն էր կատարվել հակառակորդի խաղի վերաբերյալ, և գտել էին «Ալուվան»-ի ուժեղ և թույլ կողմերը: ՈՒԵՖԱ-ի կոնֆերենցիաների լիգայի խմբային փուլի երկրորդ տուրում Երեւանի «Փյունիկ»-ը Երեւանում հաղթեց Ալուվանի ներկայացուցիչ «Ալուվան» ակումբին: «Փյունիկ»-ը, ընդհանուր առմամբ, անցկացրեց կազմակերպված ու գրագետ խաղ, ինչի արդյունքում էլ արդեն առաջին խաղակետում կարողացավ երկու գոլի առավելություն ստանալ: Նախ՝ 35-րդ րոպեին գեղեցիկ հարվածով գոլի հեղինակ դարձավ Արտակ Դաշյանը, ապա՝ երկու րոպե անց ոչ պակաս փայլուն հարվածով թիմի առավելությունը կրկնապատկեց Յուսուֆ Օտուբանջին:

ՊԱՅՔԱՐԸ ԸՆԲՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Հայաստանի ազատ ոճի ըմբռանարտի հավաքականի անդամները շարունակում են պայքարն աշխարհի առաջնությունում: Այս մասին գրում է Հայաստանի ըմբռանարտի ֆեդերացիան: Սեպտեմբերի 16-ին Սերբիայում մրցագորգ են դուրս գալու 57 կգ քաշային Մանվել Խնձրցյանն ու 74 կգ քաշային Յրայր Ալիխանյանը: Խնձրցյանը պայքարը կսկսի 1/16-րդ եզրափակչից՝ Յուսիսային Մակեդոնիայի ներկայացուցիչ Վլադիմիր Եզորովի հետ պայքարով: Ալիխանյանն էլ 1/16-ում կմրցի ռումիացի Մաքսիմ Վասիլիովիչի հետ:

ՀԱՂԹԵՑ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի շախմատի կանանց հավաքականի անդամ, երկրի չեմպիոն Մարիամ Մկրտչյանը հաղթեց աշխարհի երիտասարդական առաջնությունում: Ռումինիայում ավարտին մոտեցող շախմատի աղջիկների միջև 18 տարեկանների աշխարհի առաջնության Նախավերջին՝ 10-րդ տուրում, Հայաստանի գործող չեմպիոն Մարիամ Մկրտչյանը սեւ խաղաքարերով մրցել է Լեհաստանի ներկայացուցիչ Մարտինա Վիկարիի հետ և հաղթանակ տարել՝ ժամանակից շուտ ապահովելով աշխարհի չեմպիոնի կոչումը: Մարիամ Մկրտչյանը 10 տուրերում էլ հաղթել է և 10 միավոր ունի իր ակտիվում: Առաջնության ավարտին 1 տուր է մնացել: Հայաստանը մրցաշարին ներկայացված է 12 շախմատիստով, որոնք հանդես են գալիս միջև 14, միջև 16 և միջև 18 տարեկանների խմբերում: Աշխարհի պատանեկան առաջնությունը կավարտվի սեպտեմբերի 17-ին:

ԼՈՒՐԵՐ

ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՆԻՄԱՑԻՈՆ ՖԻԼՄ

Հայաստանի ազգային կինոակադեմիան «Օսկար» 95-րդ մրցանակաբաշխության «Լավագույն օտարալեզու ֆիլմ» անվանակարգին՝ Հայաստանի կողմից առաջադրվելու համար ընտրել է ռեժիսոր Իննա Սահակյանի «Արշալույսի լուսաբացը» վավերագրական-անիմացիոն ֆիլմը:

Այս մասին հաղորդագրություն է հրատարակվել ֆիլմի ֆեյսբուքյան պաշտոնական էջում:

«Այժմ, առավել քան երբեք, կարևոր է, որ Հայոց ցեղասպանությունը վերապրածների ծայները, ինչպես Ավորայինը, լսելի դառնան», -ասվում է տեքստում:

Ֆիլմը ստեղծվել է Զորյան ինստիտուտի գիտական աջակցությամբ և Զորյան ինստիտուտի՝ Հայոց ցեղասպանության բանավոր պատմության արխիվի հիման վրա:

«Արշալույսի լուսաբացը» ստեղծվել է «Բարս Մեդիա»-ի կողմից (Հայաստան), Gebruder Beetz Filmproduktion-ի (Գերմանիա) և Artbox Laisvalaikio Klubas (Լիտվա) հետ համատեղ արտադրությամբ: «Մենք շնորհակալություն ենք հայտնում Eurimages-ին, Հայաստանի Ազգային կինոկենտրոնին, Լիտվայի կինոկենտրոնի, Arte/ZDF-ին, ինչպես նաև բոլոր այլ ֆոնդերին, դրամաշնորհներին և հիմնադրամներին, ովքեր օգնել են այս ֆիլմի արտադրությանը», -նշված է հաղորդագրության մեջ:



ԵՐԿՐՈՒ ՄԵԾ ՊՐԵՄԻԵՐԱ

Այս պահի զբաղվածությունս բացառապես կապված է Գյումրու դրամատիկական թատրոնի հետ, առջեւում սպասվում են երկու մեծ պրեմիերաներ:

Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում ասաց դերասանուհի Տաթև Դազարյանը՝ անդրադառնալով ներկա գործունեությանը:

«Իհարկե ստեղծագործական գործունեությունս միայն Գյումրու թատրոնով չի սահմանափակվում, Երեւանում նույնպես

ունեմ կիսատ թողնված շատ գործեր, արդեն սկսել են թատերական ինստիտուտում դասերը, ինչպես նաև դասավանդում եմ մի քանի թատերական այլ դպրոցներում, հեռուստատեսություններում, զբաղվում եմ կրկնօրինակմամբ, ինչպես նաև թատրոնում ունենք «թատերական ընթերցանություն» ձեռագրի, որով հիմնականում զբաղվում եմ ես, և անում եմ փոքրիկ դահլիճում փոքրիկ բեմադրություններ, և միջև տարվա վերջ կունենանք երեք նոր պրեմիերաներ», -ընդգծեց դերասանուհին:

Լ. ԵՂԻԱԶՈՐՅԱՆ

● Սեպտեմբերի 18-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Կառավարական համերգ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-5000 դրամ: Սկիզբը՝ 19:00:



ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Որո՞նք են երկրաբանական տեղեկության սրամադրման կարգը եւ բացահայտման սահմանափակումը:

Գոհար Վարդանյան (31 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ.

Երկրաբանական տեղեկությունը տրամադրվում է անվճար. լիազոր մարմինն վճարում են միայն տեղեկության տրամադրման հետ կապված մատուցված ծառայությունների դիմաց՝ կառավարության սահմանած կարգով:

Շնորհաբազմազորման իրավունքի սահմաններում ընդերքօգտագործողի ստացած երկրաբանական տեղեկությունը ընդերքօգտագործման իրավունքի ժամկետում չի կարող բացահայտվել՝ առանց ընդերքօգտագործողի համաձայնության: Լիազոր մարմինը պարտավոր է ապահովել երրորդ անձանցից երկրաբանական տեղեկության գաղտնիությունը դրա կուտակման, արձանագրման, պահպանության, փոխանցման եւ օգտագործման ընթացքում:

Երկրաբանական տեղեկության գաղտնիության բացահայտման դեպքում բացահայտողը ենթարկվում է պատասխանատվության՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Շրջակա միջավայրի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԳ».

Երկրաբանական տեղեկության բացահայտման արգելքը չի գործում, եթե երկրաբանական տեղեկությունը տրամադրվում է՝

- 1) դատարանի որոշման հիման վրա.
2) ընդերքօգտագործման իրավունքների վերաբերյալ պետական վիճակագրական հաշվետվություն կազմելու նպատակով.
3) լիազոր մարմնի ներքին շրջանակներում օգտագործման նպատակով.
4) ընդերքօգտագործման եւ պահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմին, հարկային մարմիններին՝ վերջիններիս իրավասության սահմաններում օրենքով սահմանված կարգով իրականացվող վերահսկողական եւ հսկողական աշխատանքներում օգտագործելու նպատակով:
5) սույն օրենսգրքի 9-րդ հոդվածով նախատեսված՝ ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնության շրջանակներում:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է կասարկում ֆեական գործերի միացումը եւ անջատումը

Համլետ Օհանյան (38 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ.

Քննիչի, դատախազի կամ դատարանի կողմից մեկ վարույթում կարող են միացվել մեկ կամ մի քանի հանցագործությունների կատարմանը մասնակցելու մեջ մեղադրվող մի քանի անձանց գործերը կամ մի անձի կողմից կատարված մի քանի հանցագործությունների վերաբերյալ գործերը, ինչպես նաեւ ցանկացած այլ քրեական գործեր, եթե, դրանց փաստական հանգամանքներով պայմանավորված, առկա է բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ քննություն ապահովելու անհրաժեշտություն:

ՀՀ քննչական կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԳ».

Մեկ կամ մի քանի հանցագործությունների կատարմանը մասնակցից անձանց նկատմամբ գործն անջատվում է քննիչի, դատախազի կամ դատարանի որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է գործի հանգամանքներից ելնելով եւ չի կարող անդրադառնալ գործի վարույթի լրիվության եւ օբյեկտիվության վրա:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Գավառ-Վարդենիս ավտոճանապարհին



Քաղաքացին, կարծես, աստվածաշնչյան խոսքը քարոզելու հետաքրքիր տարբերակ է գտել. այս կերպ նա ցանկանում է հիշեցնել մարդկանց ապաշխարության կարեւորությունը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

Subscription form with fields for name, address, phone, and a contact number: 362. (060) 490049 0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.



«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ՝ 010 54-64-23 Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086 տրված է 24.11.2010 Ստորագրված է տպագրության 16.09.2022

Գլխավոր խմբագիր՝ ԶՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: